ԿՐԹԱԿԱՆ

# ՀԵՏԱՁԳՎԵԼ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՈՒՄԸ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Ամիլախվարիի որոշմամբ՝ առաջատար եւ մենթոր ուսուցչի կարգավիճակի բարելավման հմտությունների ստուգման համար գրանցումը հետաձգվել է մինչեւ 2024 թվականը:***

Ինչպես նշեց նախարարը՝ սա չի խանգարի հայտարարված ժամկետներին, եւ առաջատար ու մենթոր ուսուցիչներին հնարավորություն կտրվի բարձրացնել իրենց կարգավիճակը՝ մինչեւ 2024-2025 ուսումնական տարվա մեկնարկը:

- Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի պաշտոնում նշանակվելուց հետո, մի շարք հանդիպումներ եմ անցկացրել ուսուցիչների հետ՝ հաշվի առնելու նրանց կարծիքները, ցանկությունները եւ առաջարկությունները: Շատ հետաքրքիր մտքեր եմ լսել եւ աշխատանքներ են տարվում բոլոր ուղղություններով: Մեր հիմնական խնդիրը կրթության որակի բարձրացումն է, որն առաջին հերթին պետք է սկսել ուսուցչի մասնագիտության ճանաչումից ու արժեւորումից եւ նրանց համար հարմար աշխատանքային միջավայր ու պայմաններ ստեղծելուց:

Ներկա փուլում ուսուցիչներն անցնում են պորտֆոլիոյի գնահատման փուլ, որը լրացուցիչ հնարավորություն կնձեռի ճիշտ վերլուծել կարիքները: Ուստի որոշում եմ կայացրել առաջատար եւ դաստիարակ ուսուցչի կարգավիճակի բարելավման հմտությունների ստուգման գրանցումը տեղափոխել 2024 թվականի սկիզբ: Սակայն, այս գործընթացը չի ազդի հայտարարված ժամկետների վրա, եւ նրանց հնարավորություն կտրվի բարելավել իրենց կարգավիճակը՝ մինչեւ 2024-2025 ուսումնական տարվա մեկնարկը:

Բնականաբար, ուսուցչի մասնագիտական զարգացումը նրա ամենօրյա գործունեության գործընթացն է: Ըստ այդմ մեզ համար կարեւոր է, որ ուսուցիչները մշտապես ունենան ամբողջական աջակցություն համակարգի բոլոր օղակներից՝ իրենց մասնագիտական զարգացման համար,- ասաց նախարարը:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՍԿՍՎԵՑ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ III ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՆՑՄԱՆ ՓՈՒԼԸ

***Գրանցումը կիրականացվի կրթության կառավարման տեղեկատվական համակարգի registration.emis.ge կայքում:***




Գրանցումն ապահովում է ծնողի/օրինական ներկայացուցչի կողմից էլեկտրոնային կարգով գրանցված աշակերտի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացնելը՝ հունիսի 26-ից մինչեւ հուլիսի 12-ը ներառյալ: Վերոնշյալ ժամանակահատվածում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, գրանցումն ավտոմատ կերպով չեղարկվում է:

Առաջին դասարանցիների համընդհանուր գրանցման մանրամասն հրահանգը ներկայացված է https://www.mes.gov.ge/.../pirvelklaselta%20registraciis... կայքում:

Հիշեցնենք, որ այն աշակերտները, ովքեր չեն գրանցվել I, II եւ III փուլերում կամ ցանկանում են փոխել գրանցումը, կարող են դպրոցներում գրանցման IV փուլում՝ հուլիսի 17-ից մինչեւ 28-ը ներառյալ, հավակնել թափուր մնացած տեղերին կամ, ցանկության դեպքում, գրանցվել նախորդ փուլերում ազատված տեղերում: Աշակերտների գրանցման IV փուլն ապահովում է հանրային դպրոցը՝ ծնողի/օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված պարտադիր փաստաթղթերի հիման վրա:

Առաջին դասարանի աշակերտի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերն են. աշակերտի օրինական ներկայացուցչի դիմումը, որն ընդգրկելու է օրինական ներկայացուցչի բնակության հասցեն եւ հեռախոսը եւ պետք է բավարարի Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված մյուս պահանջները, պարունակի օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի եւ Վրաստանում բնակությունը հաստատող փաստաթղթի պատճենները (նմանը գոյության դեպքում): Օտար լեզվով փաստաթղթերի ներկայացման դեպքում՝ դրանց պետք է կցվեն Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով վրացերենի թարգմանությունը, աշակերտի ծննդյան վկայականը կամ անձը հաստատող փաստաթղթի ու Վրաստանում բնակությունը հաստատող փաստաթղթի պատճենները (նմանը գոյության դեպքում): Օտար լեզվով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ դրանց պետք է կցվի Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով վրացերենի թարգմանությունը:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը ծնողներին կոչ է անում ուշադրությամբ հետեւել գրանցման ժամկետներին ու պայմաններին, որպեսզի երեխաների գրանցումը հանրակրթական հաստատություններում իրականացվի ժամանակին եւ առանց խափանումների:

ՊՐԵՄԻԵՐԱ

# ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԼԵԳԵՆԴԱՐ ԲԵՄԻՆ ՆՈՒՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԲԵՄԱԴՐՎԵՑ ՎՐԱՑԵՐԵՆ՝ ՌՈՒՍԹԱՎԵԼՑԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ՝ ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՄԱՄԲ

***Հունիսի 2-ին, 3-ին եւ ապա՝ 4-ին Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան ազգային ակադեմիական թատրոնում Երեւանի Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Հակոբ Ղազանչյանի բեմադրությամբ կայացան ժամանակակից հայ գրող, ամերիկաբնակ Մարո Մադոյան-Ալաջաջյանի «Ապրիր, քանի դեռ ապրում ես» պիեսի առաջնախաղերը: Առաջին երկու օրերին առաջնախաղը մատուցվեց վրաց լեզվով՝ ռուսթավելցիների դերասանական խաղով, իսկ հունիսի 4-ի ներկայացումը հայերեն էր՝ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասանների դերակատարմամբ: Թատերասերի ու նաեւ թատերագետի համար, սա հետաքրքիր ու բացառիկ հնարավորություն էր համեմատելու, արժեւորելու ու նաեւ ճանաչելու համար:***


... ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԸ

Աշխարհի տարբեր բեմերում, տարբեր ներկայացումներով հանդես եկած Հակոբ Ղազանչյանը, Ռուսթավելու թատրոնում ներկայանում էր երկրորդ անգամ: Առաջինը՝ մի քանի տարի առաջ բեմադրված Կարինե Խոդիկյանի «Յագո կամ տրակտատ թաշկինակի մասին» պիեսն էր:

*- Նորից մեծ սիրով ու պատվով ընդունեցի աշխարհահռչակ ռեժիսոր, Ռուսթավելու թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբիկո Ստուրուայի հրավերը,- ասում է Հ.Ղազանչյանը,- որովհետեւ սա լեգենդար թատրոն է՝ անկրկնելի պատմությամբ: Մեծ հաճույք է այս թատրոնում ու այս դերասանների հետ աշխատելը: Իմ տեսած հանրահայտ բեմադրությունների՝ Ստուրուայի բացառիկ՝ «Կովկասյան կավճաշրջանի», «Լիր արքայի», «Ռիչարդ Երրորդի» եւ ինձ համար կուռք դարձած մյուս ներկայացումների դերասաններն էին ընդգրկված այս պրեմիերայի մեջ: Դե, իսկ հաջորդ օրը պիեսը ներկայացվեց իր օրիգինալ տարբերակով՝ հայերեն, ինձ համար վաղուց արդեն հարազատ դարձած ադամյանցիների խաղով: Այս երեք ամիսների ընթացքում չափազանց հետաքրքիր էր առավոտյան աշխատել վրացի, երեկոյան՝ հայ դերասանների հետ, շնորհավորում եմ ու շնորհակալ եմ բոլորին:*


ՌՈՒՍԹԱՎԵԼՑԻՆԵՐԸ ԵՎ ...

Ադամյանցիների խաղը «Վրաստանի» հետ զրույցում մեկնաբանեց նաեւ հանճարեղ Ռոբիկո Ստուրուան, իր խոսքում մեծապես արժեւորելով Հակոբ Ղազանչյանի հետ իր ջերմ բարեկամությունը.

*- Ադամյանցիները նորից պատվով դուրս եկան, նորից ապացուցեցին ու հաստատեցին իրենց վարպետությունն ու անհրաժեշտությունը վրաց ու հայկական թատրոնների պատմության մեջ,- նշեց Ռ.Ստուրուան:- Ջերմորեն շնորհավորում եմ Հակոբին, իմ լավագույն բարեկամին ու գործընկերոջը: Նրա շնորհիվ կայացավ ոչ միայն միանգամից երկու հրաշալի պրեմիերա, այլեւ թատերական հետաքրքիր նախագիծ, որը կցանկանայի շարունական դառնար: Միջմշակութային փոխայցելությունները շատ կարեւոր են մեր երկու ժողովուրդների համար: Հայկական հյուրընկալությամբ ու թատերական հրաշալի օրերին մեր թատրոնի մասնակցությամբ տպավորված վերադարձանք Գյումրիում ու Երեւանում կայացած թատերական փառատոնից: Այժմ Հակոբն է նույն ոգեւորվածությամբ վերադառնում Հայաստան: Ի՞նչ ասեմ, կեցցե' հաջորդը...*

Հատկանշական էր, որ «Ապրիր, քանի դեռ ապրում ես» ռուսթավելցիների առաջնախաղը դիտած վրաց թատրոնի հանրահայտ դեմքերը, հետաքրքրությամբ դիտեցին նաեւ ադամյանցիների առաջնախաղը: Վրաստանի ժողովրդական դերասանուհի Մարինա Կախիանին «Վրաստանի» հետ զրույցում, ասաց.

*- Ուրախ եմ, որ վրաց թատրոնի ներկապնակն ունի նաեւ այս՝ հայկական գույնը՝ առավել քան տաղանդավոր ադամյանցիների տեսքով: Հիանալի դերասաններ են: Շնորհավորում եմ բոլորին, Թբիլիսիի հայկական թատրոնի նորակառույց շենքում ինձ համար սիրելի դարձած դերասանների ներկայացումը դիտելու ակնկալիքով:*

...Պրեմիերայի երկու դեպքում էլ դահլիճը լեփ-լի էր, երկու դեպքում էլ՝ ծերանոցում ընթացող նույն սյուժեով, երկու դեպքում էլ նույն ուղերձով՝ երբեք ուշ չէ սիրելու ու երբեք ուշ չէ կյանքը վայելելու համար:

*- Շնորհավորում եմ բոլորիս: Շնորհավորում եմ ռուսթավելցիներին,-* ասում է Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի տնօրեն Լուիզա Խաչատուրյանը,- *ադամյանցիներին՝ Անժելա Ղազարյանին, Լեւոն Ուզունյանին, Նանո Պողոսյանին, Գլորիա Գեւորգյանին, Սոֆյա Ներսիսյանին, Հենրիխ Պետրոսյանին, Արթուր Գրիգորյանին, Արեն Մկրտչյանին, Քրիստինա Թումասյանին, Արամ Միքայելյանին, Մարի Խաչոյանին, Ալլա Ավետիսյանին: Ու նաեւ ցանկանում՝ նորից շնորհակալություն հայտնել Ռուսթավելու թատրոնի ղեկավարությանը՝ մեզ մշտապես գրկաբաց ընդունելու համար: Այս համբավավոր թատրոնից մենք շատ բան սովորեցինք, եւ ես անասելի ուրախ եմ, որ մեր թատրոնի վերակառուցման երկար ընթացքը փոխհատուցվեց նման շռայլությամբ:*

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՅԱՆՔԻ ՆՊԱՏԱԿ



***Բոլորս ենք երազում երջանիկ լինել, թեպետ մշտապես երջանիկ լինելը, հավանաբար, ինարավոր հասկացություն է։ Հետաքրքիր է՝ գիտնականներն ինչպե՞ս են դասակարգում երջանկություն հասկացությունը։***

***Պ.ՍԱՐԳՍՅԱՆ***

***Բաթումի***

Դուք որոշակիորեն իրավացի եք, շատերի համար երջանկության որոնումը կյանքի նպատակ է։ Սակայն երջանկությունը շատ տարբեր է։ Ահա թե ինչպես են մասնագետները դասակարգում ու բնութագրում երջանկությունը։

**Պարզ երջանկություն.** Հանկարծակի ցանկություն է առաջանում գրկել ողջ աշխարհը, երգել, պարել, ծիծաղել։ Երջանկության նման անսպասելի զգացումը կապված է օրգանիզմի ներքին վիճակի, հիմնականում՝ հորմոնների բարձր մակարդակի հետ, որոնք անմիջականորեն ազդում են զգացմունքների վրա։ Սակայն պատահում են ինչպես վերելքի, այնպես էլ՝ անկման պահեր։ Փրկում է այն, որ հասկանում ես, որ շուտով ամեն ինչ լավ կլինի։

**Դեպքից դեպք երջանկություն.** Որքան շատ հաճելի դեպքեր են պատահում մեզ հետ եւ մեր շուրջ, այնքան մեր ընկալումը լավատեսորեն է տրամադրվում շրջակա միջավայրին։ Սակայն, ոչ բոլոր մարդիկ են երջանկության զգացումը պահպանում երկար։ Ոմանք կարիք ունեն նորանոր լիցքերի։ Ոչ բոլորն են կարող երջանկություն ապրել ամենօրյա հասարակ գործերից։ Դա բերում է նո՛ր զգացողությունների որոնումների։

**Փոխանցվող երջանկություն.** Երբեմն կարելի է տեսնել զարմանալի երեւույթ՝ երջանիկ մարդկանցով մի ողջ ընտանիք եւ նույնիսկ մի ողջ տոհմ։ Երեխաներն ուրախանում են, ծնողները շողում են, ծեր սերունդը լի է լավատեսությամբ։ Իսկ լուսանկարներից նայում են նախնիները՝ նույնպես ուրախ ու երջանիկ։ Այո, իսկապես երջանկությունը փոխանցվում է։ Եվ բանը միայն խառնվածքի ու բնավորության մեջ չէ։

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՎԱԾ ՓՈՐԻՆ ՍՈՒՐՃ ԽՄԵԼԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է



***Արդեն քանի փարի է՝ սովորություն է դարչել օրը սկսել մի բաժակ սուրճով։ Այն ինչ թարմայնում է, ազդակ հաղորդում։ Լսել եմ, որ սոված փորին սուրճ խմելը վփանգավոր է, թեպեփ չի ճշգրփվում՝ ինչո՞վ է վփանգավոր։***

***Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ***

***Բոլնիսի***

Իրոք, նրանք, ովքեր օրը սկսում են մի բաժակ սուրճով, պետք է իմանան, որ սոված փորին սուրճ խմելը օրգանիզմին լավ չէ։ Սուրճի պարգեւած ակտիվությունը 20-30 րոպե անց սկսում է նվազել։ Սուրճի չարաշահումը (օրական 2 բաժակից ավելի) սկսում է բացասական ազդեցություն գործել՝ ի հայտ է գալիս ընդհանուր թուլություն, սիրտը սկսում է անկանոն աշխատել։

Սուրճը պարունակում է կոֆեին, շաքարներ, դաբաղիչ նյութեր, ազոտային միացություններ, ճարպեր եւ այլն։

Սուրճը տոնուս պարգեւող, առույգացնող, թարմացնող, ցավերը մեղմող, քունը վանող ըմպելիք է։ Սուրճը կարող է նաեւ վնասակար ազդեցություն գործել՝ արագացնել սրտի զարկերը, բարձրացնել արյան ճնշումը, առաջացնել գլխացավ եւ անքնություն։

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ

## ԲՈՒԺՈՒՄ՝ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔՈ

***Դեռեւս անհիշելի ժամանակներից մարդիկ գիտեին երաժշտության բուժիչ հատկությունների մասին։***

Այդ մասին գրել են Պյութագորասը, Պլուտոնը, Արիստոտելը։ Ավիցեննան երաժշտության օգնությամբ բուժում էր հոգեկան հիվանդներին, Հիպոկրատը՝ անքնությամբ տառապողներին։ Հին Չինաստանում բժիշկները նույնիսկ երաժշտական դեղատոմսեր էին դուրս գրում։ Այսօր երաժշտական թերապիան լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհում։ Ապացուցված է, որ այն օգնում է կարգավորել արյան շրջանառությունը, հաղթահարել նյարդային եւ հոգեբանական խանգարումները։

Սակայն, ինչ խոսք, երաժշտությունը ոչ թե հիմնական, այլ ընդամենը օժանդակ միջոց է։ Սիրելի երաժշտությունը նվազեցնում է խոլեստերինի քանակն արյան մեջ, կարգավորում արյան ճնշումը։ Հետազոտությունները ցույց են տվել, որ Վերդիի ստեղծագործությունները համահունչ են մարդու սիրտանոթային համակարգի ռիթմի հետ։ Բարենպաստ ազդեցություն ունեն Բեթհովենի, Մոցարտի, Շոպենի, Չայկովսկու ստեղծագործությունները։

ԽՈՐՀՈՒՐԴ

# ԻՆՉՊԵ՞Ս ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՄԱՌՆ ԱՌԱՆՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

*Վերջապես եկավ ամառը։ Դու շատ երկար էիր սպասում ամառային արձակուրդներին, անհամբեր հաշվելով օրերը, եւ ահա՛, արդեն հունիս ամիսն է։ Ինչպե՞ս անցկացնել ամառը, որպեսզի մի լավ հանգստանաս եւ միաժամանակ՝ չհիվանդանաս։*



Դու ունես մեծ ընտրություն, թե ինչպես անցկացնել ամառային հանգիստը։ Կարող ես մի լավ քնել, վերջապես, կարող ես զբոսնել եւ խաղալ ընկերներիդ հետ բակում, այցելել լողավազան, կամ մնալ տանը եւ դիտել հեռուստացույց, խաղալ սեղանի խաղեր, գիրք կարդալ, մի նոր բան սովորել։ Կամ էլ՝ կարող ես գնալ քաղաքից դուրս, տատիկ-պապիկի մոտ՝ գյուղ, մեկնել ամառային ճամբար, մասնակցել արշավների, ճանապարհորդել ծնողներիդ կամ ընկերներիդ հետ։

Տարբերակները շատ են, մնում է վայելել այդքան սպասված ազատությունը։

Իհարկե, արձակուրդներին լավ կլինի փոխել միջավայրը, ստանալ նոր տպավորություններ, հաճելի եւ օգտակար զբաղմունք գտնել՝ համատեղելով ֆիզիկական ու մտավոր աշխատանքը, որպեսզի լիարժեք հանգստանալ եւ ժամանակդ զուր չվատնել։

Ամառվա արեւոտ եղանակը, մարդու օրգանիզմի վրա իր բարերար ազդեցության հետ մեկտեղ, կարող է նաեւ առաջացնել տարաբնույթ խանգարումներ, հատկապես, երբ օդի ջերմաստիճանը շատ բարձր է։

Ամռանը ավելանում է սննդային թունավորումների եւ աղիքային հիվանդությունների վտանգը։ Ուստի պետք է խստորեն հետեւել հիգիենայի կանոններին, օգտվել ջրի ապահով աղբյուրներից, որպեսզի ամառային հանգիստը չխանգարվի հիվանդության պատճառով։

Բացի այդ, շոգ եղանակին ավելանում են մրսածությամբ պայմանավորված հիվանդությունները՝ խիստ սառեցված հեղուկներ խմելու, օդորակիչը ոչ ճիշտ օգտագործելու, ինչպես նաեւ սառը ջրում լողալու պատճառով։

Շոգ եղանակին մարդու օրգանիզմի վրա ազդող բացասական գործոններն են օդի բարձր ջերմաստիճանը եւ ուլտրամանուշակագույն ճառագայթումը։ Բացի այդ, բարձրանում է սննդային թունավորումների եւ աղիքային վարակների, ինչպես նաեւ մրսածության վտանգը։

Արեւի ճառագայթների երկարատեւ ազդեցությունը կարող է բացասաբար անդրադառնալ օրգանիզմի վրա։ Արեւի ուղիղ ճառագայթների տակ երկար մնալու դեպքում՝ առաջանում են արեւայրուքներ (մաշկի կարմրություն, այտուց, ցավ, ծանր դեպքերում՝ բշտեր), արեւահարություն, ֆոտոալերգիա, հետագայում կարող են առաջանալ մաշկի չարորակ նորագոյացություններ։ Կարող են զարգանալ նաեւ ընդհանուր երեւույթներ՝ ջերմություն, գլխացավ, սարսուռ, սրտխառնոց, փսխում, քթային արյունահոսություն։

Օդի բարձր ջերմաստիճանը բերում է օրգանիզմի ջերմակարգավորող համակարգի գերծանրաբեռնվածության եւ տարբեր խանգարումների, հատկապես վտանգավոր է բացօթյա պայմաններում շոգ եղանակին ֆիզիկական ծանր աշխատանք կատարելը։

Շոգ եղանակին խիստ ավելանում է քրտնարտադրությունը՝ օրգանիզմի հովացման համար։ Սովորաբար, օրվա ընթացքում գոլորշիանում է 2-2.5 լ հեղուկ, շոգ եղանակին՝ մինչեւ 3-4 լ։ Արդյունքում օրգանիզմը ջրազրկվում է՝ կորցնելով հեղուկներ եւ հանքային աղեր։ Ջրազրկումը եւ ընդհանուր վիճակն է՛լ ավելի են վատանում, եթե առաջանում է լուծով եւ փսխումով արտահայտվող սննդային թունավորում կամ աղիքային վարակ։ Առաջանում է թուլություն, գլխացավ, քնկոտություն, գլխապտույտ, սաստիկ ծարավ, նվազում է մտավոր գործունեությունը, կարող են առաջանալ սրտի աշխատանքի խանգարումներ։

Արեւի ուղիղ ճառագայթներից եւ շոգից հատկապես կարեւոր է պաշտպանել փոքր երեխաներին, հղիներին, ծերերին եւ քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց, որոնք առավել խոցելի են բարձր ջերմաստիճանի նկատմամբ։

Ջերմաստիճանի բարձրացման բացասական ազդեցությունը մեղմելու, օրգանիզմի անցանկալի գերտաքացումը կանխելու, ինչպես նաեւ մրսածությունից եւ թունավորումներից խուսափելու համար, անհրաժեշտ է պահպանել հետեւյալ կանոնները՝ խուսափել արեւի ուղիղ ճառագայթներից, հատկապես ցերեկվա ժամերին, աշխատել ստվերում քայլել, առօրյա գործերը կատարել օրվա համեմատաբար զով ժամերին, ցերեկային ամենաշոգ ժամերին խուսափել ֆիզիկական աշխատանքից, օգտագործել շատ հեղուկ, շատ մրգեր եւ հում բանջարեղեն, թեթեւ դյուրամարս սնունդ, հրաժարվել յուղոտ կերակուրներից, հետեւել, որպեսզի օդափոխիչի կամ օդորակիչի սառը օդի ուժեղ հոսանքն ուղղված չլինի անմիջապես մարդկանց վրա։ Օդորակիչներ ունեցող տարածքներում հագնվել ջերմաստիճանին համապատասխան։

Հետեւիր վերը նշված խորհուրդներին, մի՛ մոռացիր անվտանգության մասին եւ լիարժեք վայելիր ամառային հանգիստը։

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *Դատավորը կարդում է դատավճիռը.*

*- Պետական պաշտոնյային բանավոր վիրավորանք հասցնելու համար, տուգանքը՝ 200 լարի։ Մեղադրյալ, ցանկանո՞ւմ եք խոսք ասել։*

*- Ցանկանում եմ, սակայն այնպիսի սակագներ ունեք, որ ավելի լավ է լռեմ։*

☺ *- Կոկիկ հագնված տղամարդուց՝ քրքրված, կեղտոտ շորերով մի մարդ փող խնդրեց։ Տղամարդը գրպանից հանեց 100 լարիանոց եւ հարցրեց.*

*- Եթե այս փողը տամ, հավանաբար, խմի՞չք կգնես։*

*- Ոչ, արդեն երկար ժամանակ է, ինչ թողել եմ խմելը։*

*- Ուրեմն, խաղատա՞նը կծախսես։*

*- Ոչ, որտեղի՞ց այդքան փող, հազիվ եմ գլուխս պահում։*

*- Ուրեմն, տոտալիզատորո՞ւմ կծախսես։*

*- Տոտալիզատորներում ընդհանրապես չեմ լինում։*

*- Ի՞նչ է, պոռնկանոցո՞ւմ ես ծախսելու։*

*- Ոչ, ինձ որտեղի՞ց այդքան փող, որ նման տեղերում լինեմ։*

*- Այդ դեպքում, հիմա ինձ հետ միասին կգնանք իմ տուն։ Կինս համեղ ճաշ է պատրաստել, միասին կճաշենք։*

*- Սակայն, եթե քո կինը ինձ տեսնի այսպես հագված, կեղտոտ, գարշահոտով, տանից դուրս կվռնդի։*

*- Ոչ, ուղղակի ցանկանում եմ ցույց տալ, թե որքա՞ն կարող է ընկնել մարդը, ով հրաժարվել է խմիչքից, ազարտային խաղերից ու սեքսից։*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



☞ *Մարդը հաճախ ինքն է իր ոխերիմ թշնամին։*

***Ռ.ՕՊԵՐՀԱՅՄԵՐ***

☞ *Մեկն առաջին շարքում անգույն է, սակայն երկրորդում փայլում է։*

***Ֆ.ՆԻՑՇԵ***

☞ *Ընտանեկան երջանկության համար անհրաժեշտ է սեր եւ համբերություն, նաեւ, որպես հավելված, երկու հեռուստացույց, երկու համակարգիչ՝ համացանցով։*

***Ա.Խ.***

***«Վրաստանի» ընթերցող***

***Թբիլիսի***

# ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

*Հունիսի 7-9-ին, աշխատանքային այցով Ռուսաստանում գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Սոչիում մասնակցեց եվրասիական միջկառավարական խորհրդի նեղ կազմով նիստին:*




Նիստում եվրասիական տնտեսական միության երկրների վարչապետերը քննարկեցին եվրասիական ինտեգրացիային առնչվող արդիական մի շարք հարցեր: Մասնավորապես, անդրադարձան ԵԱՏՄ ներքին շուկայի գործունեությանը, տարբեր ոլորտներում համագործակցությանը վերաբերող հարցերի:

Միջկառավարական խորհրդի ընդլայնված կազմով նիստը անցկացվեց հունիսի 8-ին:

Աշխատանքային այցի շրջանակներում՝ Հայաստանի վարչապետը հանդիպում ունեցավ վարչապետ Միխայիլ Միշուստինի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ բազմոլորտ հարաբերությունների զարգացման դինամիկան, անդրադարձ եղավ տարածաշրջանային անվտանգության հարցերին:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ 4,4 ՏՈԿՈՍ Է

*Համաշխարհային բանկի «Գլոբալ տնտեսական հեռանկարներ» հունիսյան զեկույցում միջազգային ֆինանսական այդ կազմակերպությունը, 2023 թվականի համար, Հայաստանում կանխատեսում է 4,4 տոկոս տնտեսական աճ՝ իր նախորդ կանխատեսման ցուցանիշը բարձրացնելով 0,3 տոկոսով:*

Զեկույցի համաձայն՝ Համաշխարհային բանկը Հայաստանում տնտեսական աճը 2024-ի համար գնահատում է 4,8 տոկոս, իսկ 2025-ին՝ 5 տոկոս:

Ինչ վերաբերում է տարածաշրջանի երկրներին, ապա բանկը, նախորդ կանխատեսման համաձայն, 0,6 տոկոսով նվազեցրեց Ադրբեջանի համար կանխատեսումը՝ տնտեսական աճը 2023-ի համար գնահատելով ընդամենը 2,2 տոկոս: Համաշխարհային բանկը 2024-ին Ադրբեջանում կանխատեսում է 2,5, իսկ 2025-ին՝ 2,6 տոկոս տնտեսական աճ:

Այս տարի Վրաստանի համար՝ բանկը կանխատեսում է նույն տնտեսական աճը, ինչ Հայաստանի դեպքում՝ 4,4 տոկոս, իսկ 2024-ին եւ 2025-ին՝ 5-ական տոկոս:

Իսկ Թուրքիայում, 2023-ի համար, Համաշխարհային բանկը տնտեսական աճը կանխատեսում է 3,2 տոկոս, 2024-ին՝ 4,3 տոկոս, 2025-ին՝ 4,1 տոկոս:

Համաշխարհային բանկի Գլոբալ տնտեսական հեռանկարների հունիսյան զեկույցը կանխատեսում է, որ 2023-ին Եվրոպա եւ Կենտրոնական Ասիա տարածաշրջանում տնտեսական աճը կկազմի 1,4 տոկոս:

## ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է 35 ՏՈԿՈՍՈՎ

*Ընթացիկ տարվա առաջին 4 ամիսներին Հայաստան է այցելել 630 հազար զբոսաշրջիկ: Հայաստանի զբոսաշրջության կոմիտեի տվյալներով, 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, գրանցվել է 35 տոկոս աճ:*

Զբոսաշրջիկների մեծ մասը գալիս է Ռուսաստանից՝ մոտ 52 տոկոս, որին հաջորդում է Վրաստանը, Իրանը: Զբոսաշրջային այցերի բավական ակտիվություն ենք նկատում էմիրություններից: Զբոսաշրջային այցերի ակտիվության առումով առանձնանում է ապրիլ ամիսը: Միայն ապրիլին Հայաստան է այցելել 180 հազար զբոսաշրջիկ:

Զբոսաշրջության կոմիտեի տվյալներով՝ բավական աշխատանք է տարվում միջազգային շուկայում Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու ուղղությամբ: Թիրախավորվում են եվրոպական երկրները, էմիրությունները: Հայաստան տուրիստների ակտիվությունն ապահովում է նաեւ այլ քաղաքներից դեպի Երեւան ուղիղ չվերթերի իրականացումը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ 66 ՏՈԿՈՍՆ ԱՊԱՀՈՎՎԱԾ Է ԼԱՅՆԱՇԵՐՏ ՀԱՄԱՑԱՆՑՈՎ

*Հայաստանում բնակավայրերի 66 տոկոսն ապահովված է լայնաշերտ ինտերնետով, Հայաստանի բնակչության 96 տոկոսը հնարավորություն ունի օգտվելու ինտերնետից:*

Այդ մասին ասվեց հեռավոր համայնքներում ինտերնետ հասանելիություն ապահովելու հնարավորությունների ստեղծման համար լուծումներ գտնելու նպատակով անցկացված՝ «Ապահովելով հասանելիություն բոլորին՝ Եվրոպա եւ տարածաշրջան» խորագրով գագաթաժողովին: Նշվեց նաեւ, որ Հայաստանի կառավարությունն իր ուշադրության կենտրոնում է պահում բնակավայրերը լայնաշերտ ինտերնետով ապահովելու ծրագիրը, եւ 2021-2026 թվականների ծրագրում առկա է կետ՝ բնակավայրերի 80 տոկոսը մինչեւ 2026 թվականը լայնաշերտ ինտերնետով ապահովելու վերաբերյալ:

## «ՀՈՒՍՈ ԱՌԱԳԱՍՏ 2023» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*«Սիվիլ արտ» մշակութային հասարակական կազմակերպությունը, «Բարդերի ակումբ» ստեղծագործական միավորումը եւ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, արդեն 8-րդ անգամ, մեկնարկել են «Հուսո առագաստ 2023» հեղինակային երգի ամենամյա միջազգային փառատոնը:*

Այս տարի փառատոնն ընթանալու է 3 փուլով՝ նախընտրական, ընտրական եւ սեւանյան:

Նախընտրական փուլի ընթացքում կընդունվեն հայտերը, որի վերջնաժամկետն է հունիսի 20-ը: Ի դեպ, անցած տարվանից դիմել կարող են ինչպես հեղինակ-կատարողները, այնպես էլ՝ այլ հեղինակների ստեղծագործությունները սեփական մեկնաբանությամբ կատարող անձինք:

Նախնական ընտրությունն անցած հայտատուները կմասնակցեն ընտրական փուլին, որը կկայանա հունիսի 30-ին, «Մետրո» թատրոնում: Համերգի ընթացքում ժյուրին կընտրի լավագույններին, որոնք եւ հնարավորություն կստանան մասնակցել փառատոնի սեւանյան փուլին:

Փառատոնի սեւանյան փուլը կներառի երեք համերգային օրեր, որոնք տեղի կունենան հուլիսի 20-23-ը, Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղին հարակից «WishUp» հանգստյան գոտում: Համերգները կամփոփվեն հավաստագրերի, շնորհակալագրերի ու խորհրդանշական նվերների հանձնման հանդիսավոր արարողությամբ:




Փառատոնը կազմակերպվում է 2015 թվականից եւ հիմնական նպատակն է սկսնակ հեղինակ-կատարողներին հայտնաբերելը, նրանց ստեղծագործական գործունեությունը խթանելը, նրանց բեմ տրամադրելը, ինչպես նաեւ՝ մշակութային միջավայր ստեղծելը եւ հեղինակային երգի սիրահարների ու երգահանների միջեւ շփում ապահովելը:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

*Հունիսի 3-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն Անկարայում ներկա գտնվեց Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ պաշտոնի ստանձնման արարողությանը:*

*Թուրքիայի նախագահական համալիրում Նիկոլ Փաշինյանին դիմավորեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլութ Չավուշօղլուն:*

*Միջոցառմանը ներկա են գտնվել նաեւ այլ երկրների ղեկավարներ եւ բարձրաստիճան ներկայացուցիչներ:*

### ԱԿՏԻՎՈՐԵՆ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԳՐԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԹԵՄԱՆ

*Ինչպես հայտարարեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը՝ վիզաների ազատականացման թեման Հայաստանի եւ ԵՄ անդամ երկրների օրակարգի հարցերից է:*

*- Վիզաների ազատականացման թեման ակտիվորեն քննարկում ենք: Մեր եւ ԵՄ-ի կամ մեր եւ ԵՄ անդամ հանդիսացող առանձին երկրի օրակարգում կա, քննարկվում է եւ, մեծամասամբ կամ գրեթե բոլոր դեպքերում, աջակցություն է ստանում,- ասաց Միրզոյանը:*

### 2022-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ Է ՆԵՐՄՈՒԾՎԵԼ ՇՈՒՐՋ 45 ՀԱԶԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ

*Հայաստանի ներքին գործերի նախարարության տեղեկատվությամբ՝ Հայաստան վերջին 5 տարվա կտրվածքով ներմուծվել է 346 հազար 631 տրանսպորտային միջոց: Տարածած տեղեկատվության համաձայն՝ 2022 թ. ներմուծվել է 44 հազար 667 ավտոտրանսպորտային միջոց, 2021-ին՝ 21 հազար 842: Իսկ 5 տարվա կտրվածքով ունենք 346 հազար 631 ներմուծված տրանսպորտային միջոց:*

### ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է ԿԱՐՄՐՈՒԿԻ 209 ԴԵՊՔ

*Հայաստանում, մարտի 3-ից մինչ օրս, գրանցվել է կարմրուկի լաբորատոր հաստատված 209 դեպք, որից 8-ը ճանապարհորդությունից վերադարձած Հայաստանի քաղաքացիներ են, ովքեր հիվանդացել են հենց շրջագայության ընթացքում:*

*Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ՝ կարմրուկի համաճարակային իրավիճակը կարող է սրվել՝ հաշվի առնելով ներկայումս զբոսաշրջության ակտիվությունը: Գերատեսչությունը հորդորում է՝ բոլոր նրանք, ովքեր պատվաստված չեն կամ թերի են պատվաստված կարմրուկի դեմ, ինչպես նաեւ՝ նախկինում չեն հիվանդացել, հանգստի մեկնելուց առնվազն 10 օր առաջ պատվաստվեն կարմրուկի դեմ:*

### ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱԶՈՒՄ Է

*Նախորդ տարվա հունիսի 1-ի համեմատ՝ Սեւանա լճի մակարդակը նվազել է 24 սանտիմետրով:*

*2023 թվականի հունիսի 1-ի դրությամբ՝ Սեւանա լիճը ծովի մակարդակից գտնվում է 1900 մետր 47 սանտիմետր բարձրության վրա՝ նախորդ տարվա նույն օրվա 1900 մետր 71 սանտիմետր նիշի դիմաց: 2023 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում՝ Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 60 միլիոն 630 հազար խորանարդ մետր ջուր, իսկ 2023 թվականի մայիսի վերջին տասնօրյակի ընթացքում՝ ոռոգման նպատակներով Սեւանա լճից Հրազդանի հունով բաց է թողնվել 23 միլիոն 965 հազար խորանարդ մետր ջուր: Սեւանա լիճ թափվող գետերում դիտվել է ջրի ելքերի փոփոխական ռեժիմ:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒՆԻՍ



*11.06.2023 Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի*

Հայոց եկեղեցու մեծ տոներից է Սբ. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սբ. Էջմիածնի հիմնադրման տոնը: Այն նշվում է Սբ. Զատիկից 64 օր հետո կամ՝ Հոգեգալստյան կիրակիին հաջորդող երկրորդ կիրակիի: Տոնի օրը մատուցվում է Սուրբ պատարագ, իսկ ժամերգությունների ընթացքում այլ շարականների հետ երգվում է նաեւ նշանավոր «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը, որը գրել է 8-րդ դարի կաթողիկոս Սահակ Ձորափորեցին: Շարականը Գրիգոր Լուսավորչի տեսիլքի եւ տաճարի կառուցման մասին է:

***13.06.2023 Հիշատակ Սբ. Նունե եւ Մանե կույսերի***

***15.06.2023 Սբ. Իսահակ եւ Հովսեփ իշխանների եւ Սարգիս եւ Բագոս վկաների հիշատակության օր***

***17.06.2023 Սբ. Ներսես Մեծ Հայրապետի եւ Խադ եպիսկոպոսի հիշատակության օր***

ԹԵԺ ԳԻԾ

## ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **14-81**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32) 5 000 777**
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

# ԱՋԱՐԻԱՅՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՍԵԶՈՆԸ

## «ԱՄԱՌԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԱՅՍՏԵՂ» ՓԱՌԱՏՈՆ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

***Հունիսի 3-ին, հանգստավայրային սեզոնի բացման կապակցությամբ, Բաթումիում մեկնարկեց «Ամառը սկսվում է այստեղ» փառատոնը: Փառատոնն ավանդաբար անցկացվեց «Այբուբենի աշտարակի» հարեւանությամբ եւ այս տարի առաջին անգամ տեւեց երկու օր:***



Այս տարվա համար Աջարիան ծրագրում է հյուրընկալել շուրջ 4 միլիոն ինչպես տեղական, այնպես էլ՝ օտարերկրյա զբոսաշրջիկի:

Նշենք, որ 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ, ներկա դրությամբ, Աջարիայում զբոսաշրջիկների թիվը կրկնապատկվել է: Բնականաբար, ավելացել է նաեւ զբոսաշրջությունից եւ ուղեւորություններից ստացված եկամուտը, նախորդ ժամանակահատվածի համեմատ, 102 տոկոսով:

Բաթումին, որը համարվում է որպես միջազգային փառատոների քաղաք, այս տարի կվերածվի նաեւ մարզական, մշակութային եւ զբոսաշրջության միջոցառումների կենտրոնի: Բաթումիում ծրագրված են այնպիսի նշանակալից ու միջազգային ծավալի միջոցառումներ, ինչպիսիք են հունիսին անցկացվելիք՝ մինչեւ 21 տարեկան ֆուտբոլիստների Եվրոպայի առաջնությունը, շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը, միջազգային զբոսաշրջության պարգեւատրման գալա միջոցառումը: Ավելացնենք, որ այս տարի Բաթումիի խաղադաշտը եւս մասնակցելու է համաշխարհային պարգեւատրման արարողությանը: Այն հավակնում է «Լավագույն հանրային տարածքի» անվանակարգի գլխավոր մրցանակին:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆՄԱՆ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՀԱՍԵԼ Է 4,801 ՄԼՆ ԼԱՐԻԻ

***2023 թվականի 4 ամսում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, մայրաքաղաք Թբիլիսիում ավտոմեքենաների կայանման համար նախատեսված տուգանքների չափն աճել է գրեթե 269 տոկոսով կամ՝ գրեթե 4 անգամ:***

Մասնավորապես, Վրաստանի միասնական բյուջեի մուտքերի համաձայն, 2023 թվականի հունվար-ապրիլ ամիսներին՝ մայրաքաղաքում կայանման կանոնների խախտման համար կիրառված տուգանքներից, բյուջե է մուտքագրվել 4,801 մլն լարի:

Ի դեպ, ավտոմեքենաների կայանման կանոնների խախտման համար տուգանքները, նախորդ տարվա աշնանից, ավելացել են, հետեւաբար՝ նշված աճը մասամբ պայմանավորված է այս փոփոխությամբ:

ՖՈՒՏԲՈԼ

# ԽՎԻՉԱ ԿՎԱՐԱՑԽԵԼԻԱՆ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՐՁԱԿՎՈՂ, ԻՍԿ ԷԴՈՒԱՐԴ ՍՊԵՐՑՅԱՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԻՍԱՊԱՇՏՊԱՆ



ԽՎԻՉԱ ԿՎԱՐԱՑԽԵԼԻԱ

Վրացի ֆուտբոլիստ, իտալական «Նապոլի» ակումբի հարձակվող Խվիչա Կվարացխելիան 2022/2023 թվականների A սերիայում արժանացել է մրցաշրջանի լավագույն խաղացող մրցանակին:

Կվարացխելիան առաջնության 33 խաղում դարձել է 12 գոլի եւ 10 գոլային փոխանցման հեղինակ:

Իսկ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ ռուսական «Կրասնոդար»-ի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը ճանաչվել է Ռուսաստանի Պրեմիեր լիգայի 2022/23 մրցաշրջանի լավագույն կիսապաշտպան: Նա նաեւ Ռուսաստանի Պրեմիեր լիգայի 2022/23 մրցաշրջանի ամենաշատ գոլային փոխանցում կատարած ֆուտբոլիստն է:



ԷԴՈՒԱՐԴ ՍՊԵՐՑՅԱՆ



# ԽԱՉԲԱՌ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Աֆրիկական պետության մայրաքաղաք: 7.Բաջանաղ: 9.Խմիչքների խառնուրդից ստացվող ըմպելիք: 10.Ոգեւորիչ: 13.Մի քանի րոպե: 16.Ինչի մեջ պահվում կամ փոխադրվում է ապրանքը: 18.Վրաց գրող ... Դադիանի: 20.Միաբջիջ կենդանի: 23.Երփներանգ, գույնզգույն: 25.Գույնի թունդը: 27.Թաքստոց: 28.Թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող բույս: 29.Մերկ: 31.Տգեղ: 32.«Ով աշխատի, նա ...»: 35.Գյուղական շրջանի վարչական միավոր, գավառակ: 36.Բաց կապույտ գույնի, կապտավուն: 37.Ազնիվ մետաղ: 38.Զգացում: 41.Չհասած՝ խակ պտուղ: 43.Կառույցի շինվածքի փոքրացրած նմուշ: 46.Աբրիգեն, տեղացի: 47.Ճապոնիայի ամենաբարձր լեռնագագաթը: 48.XV դարի պարսիկ նկարիչ ... Խալիլ: 49.Հատկանշական, բնորոշ: 50.Մածնաջուր: 51.Ֆրանսահայ նշանավոր երգչուհի ... Սարյան: 52.Սպառնալիք, կշտամբանք:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 2.Չկապակցված: 3.Ցեղասպանություն: 4.Աքաղաղ: 5.Չգիտեցող, տգետ: 6.Շիլակն: 8.Ֆրանսիացի ֆիզիկոս Պյեռ ...: 9.Խմորեղեն: 11.Հայկական հեռուստաալիք: 12.Մայր (գվռ.): 14.Հունգարացի քանդակագործ ... Բորի: 15.Եփել, պճպճալ: 17.Հայազգի ծովակալ Հովհաննես ...: 19.Վանի թագավորության արքա (Ուրարտու): 21.Առաջավոր Ասիայի ամենաերկար գետը: 22.Գաղութ: 24.Բարեհոգի, ոչ հիշաչար: 25.«Հողմը ... երկինքն առնում»: 26.«Քանի փոքրիկ ծագ ... դու»: 30.Օսլա պարունակող պալարապտղավոր մշակաբույս: 33.Երկնիշ թիվ: 34.Հին հունական գրականության հնագույն հուշարձաններից: 39.Գարնան ամիս: 40.Հույն երգիչ ... Ռուսոս: 42.Սիրիացի վիպագիր Քոլեթ ...: 44.Կանանց եւ տղամարդկանց վերնազգեստ: 45.Ռիթմ:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Մադրաս: 4.Եղեմական: 10.Ուր: 11.Նա: 12.Հռիփսիմե: 14.Արամ: 17.Առու: 18.Արագ: 19.Մեղու: 20.Անան: 21.Պնակ: 22.Ուշ: 23.Նանիր: 25.Ուլ: 28.Սա: 29.Դրամա: 32.Փարվանա: 35.Առակ: 36.Լաս: 37.Աբգար: 39.Նվաստ: 41.Ձա: 42.Այրի: 44.Թո: 45.Շիշ: 46.Լաղիձե: 48.Ռա: 49.Սիլվա: 50.Սպորտ: 52.Բազե: 54.Մրուր: 56.Ուք: 57.Տորք: 59.Պակիստան: 60.Թուզ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Մարաբու: 2.Դահուկ: 3.Առիթ: 5.Դուման: 6.Երեց: 7.Անամպ: 8.Կարեն: 9.Քսանի: 13.Իրար: 15.Աղաղակ: 16.Մուկ: 20.Անանաս: 24.Ասալա: 25.Ուդ: 26.Լրագիր: 27.Բրինձ: 30.Առա: 31.Մարկ: 32.Փշավելա: 33.Աստառ: 34.Ռաբաթ: 38.Աբաշիձե: 40.Վալիկո: 43.Յոթվերք: 45.Շաբաթ: 47.Կիտրոն: 51.Պարկ: 52.Բութ: 53.Կապ: 54.Մտա: 55.Ուր: 58.Եզ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445